




**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿԱՆԴԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ
ՍՎԱԾՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱՆ ՍՊԱՍԱԲՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՍՎԱԾԵԱՆ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԻՔԻԱ**

Կոստանդնուպոլսի հայոց Պապրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆեանից գոհունակութեամբ Կեղեկացանք, որ Պոլսոյ Պապրիարքութեան և հաւարաւոր ժողովրդի կողմից կազմակերպուում է Ձերդ Սրբազնութեանը նուիրում մեծարման հանդիսութիւն՝ Ձեր քահանայական ձեռնադրութեան յիսնամեայ յոբելեանի կապակցութեամբ: Այս առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբոխ շնորհատրանքները:

Սիրելի Սրբազան, կամօք և օրհնութեամբն Աստուծոյ յիսուն փարիներ առաջ, Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում ուսումնառութիւնից յետոյ, Ձեր սրտում ունենալով մշտաւառ սէրն առ Աստուած, Դուք անձնուիրումի ուխտ կնքեցիք Աստուծոյ Ս. Մեղանի առջեւ՝ սպանձնելով կուսակրօն հոգեւորականի պարասխանաւորու կոչումը:

Ձեր հոգեւոր սպասաւորութիւնը, որն սկսուեց երկարամեայ ուսուցագործութեամբ, պանծալի ապացոյց է ներշնչեալ ոգու, իրաւ ազգասիրութեան և մեծ հայրենասիրութեան: Արդիւնաշար է Ձեր վաստակը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում հոգեւոր սպասաւորների պարաստման ու դաստիարակութեան գործում, քանզի Դուք, իբրեւ Սրամբուի Ս. Խաչ դպրեվանքի փոխորեսուչ և ապալ փեսուչ, սրբասնունդ քաջեռանդու-

թեամբ Ձեր գովելի օրինակով շարունակեցիք զօրացնել ապագայ եկեղեցականների նախանձախնդրությունը հոգեւորականի սրբազան առաքելութեան հանդէպ:

Հայ Եկեղեցու անդամաւորանում Ձեր ծառայութեան յոբելանական առիթով արժան է նշել, որ Դուք ամենայն նուիրումով եւ քաջամտութեամբ ծառայել էք Կ. Պոլսոյ Սուրբ Աթոռի շինութեանն ու պայծառութեանը՝ բարեյիշարակ Շնորհք եւ Գարեգին Պապ-րիարքների փարիներէից սկսեալ յանձն առնելով զանազան պատասխանաւոր պաշարօններ: Ձեր արժանիքների շնորհիւ Դուք ընտրուել էք նաեւ Կ. Պոլսոյ Կրօնական ժողովի անդամ, այնուհետեւ կոչուելով նաեւ նոյն ժողովի արեւնապետութեան պաշարօնին:

Միեւնի Սրբազան, ուրախ ենք, որ ներկայիս, որպէս Պապրիարքական Փոխանորդ, նոյն քաջակորով փութաշանութեամբ հայոց ազգին Ձեր քրիստոսանուէր կեանքն ու աստուածահաճոյ գործն ընծայաբերելով, աջակից էք Կոստանդնուպոլսի Ամենապապի Պապրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին՝ բարձր ու պատասխանաւոր իր առաքելութեան մէջ:

Մեր Եկեղեցուն բերած փասնեակ փարիների Ձեր ծառայության եւ բոլորանուէր վաստակի բարձր գնահատանքով՝ Հայրապետական այսու Կոնդակով Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրական Մեր սէրն ու բարեմաղթանքները եւ, ընդառաջելով Կոստանդնուպոլսի հայոց Պապրիարք Ամենապապի Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջնորդութեանը, Ձեզ շնորհում ենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրբի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը օգնական լինի եւ զօրացնի Ձեզ, պարգևի ազգաշահ ձեռքբերումներով լեցուն քաջամողջ կեանքի փարիներ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու: Թող Աստուած մեր Եկեղեցուն եւ մեր ժողովրդին պարգևի Ձեզ պէս աստուածասէր հոգեւոր հայրեր եւ ժողովրդաւորներ մշակներ:

«Աստուած յուսոյ լի արասցէ զՁեզ ամենայն խնդրութեանք եւ խաղաղութեանք, առական Ձեզ յուսով զօրութեանք հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ Կոնդակս ի 25-ն Փետրուարի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 221